# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<11>> դեկտեմբերի 2020թ. N ՄՈ 468 - 2020

ք. Արմավիր

**<<ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԻՔԱՅԵԼ ՎԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, 161-րդ հոդվածի 3-րդ մասով, 163-րդ, 164-րդ հոդվածներով և 169-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի ՄԿ/218-2019 կարգադրությունը և <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Միքայել Վանյանի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի դիմումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Միքայել Վանյանին տրամադրել 2018-2019 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի չօգտագործած մասից 6 աշխատանքային օր և 2019-2020 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մասը 4 օր՝ 2020 թվականի դեկտեմբերի 14-ից 25-ը ներառյալ:
2. Միքայել Վանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Պավել Մկրտչյանին:
3. Միքայել Վանյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի դեկտեմբերի 28-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 11.12.2020 11:32:12 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230